

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ



ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

Ուրբաթ, 4 Յունուար.- Կէսօրէ ետք, Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտուած Աւագ Տօներու առաջին հանդիսաւոր նախատօնակին, որմէ ետք Միաբանութիւնը Ս. Աթոռոյ «Օրհնեցէք զՏէր» շարականի երգեցողութեամբ բարձրացաւ Պատրիարքարան:

Շաբաթ, 5 Յունուար.- Սրբոցն՝ Դաւթի Մարգարէին եւ Յակոբայ Տեառնեղբայր Առաքելոյն (Տօն Առաքելական Ս. Աթոռոյս Երուսաղէմի):

Ըստ սովորութեան, առաւօտեան ժամերգութեան ընթացքին Պատրիարք Սրբազան Հայրը, շուրջառ եւ եմփօրոն զգեցած, «Փառք ի բարձունս»-ին բարձրացաւ Տեառնեղբօր Աթոռի պատուանդանին ուր մնաց մինչեւ ժամերգութեան աւարտիլը, եւ ընդունեց Միաբանութեան եւ դպիրներուն շնորհաւորութիւնները:

Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Դարիպեան «Քրիստոս Աստուած մեր» մաղթանքի ընթացքին մասնաւոր բարեմաղթութիւններ ըրաւ Նորին Ամենապատուութեան բարօր կենաց համար:

Օրուան Ս. Պատարագը Աւագ Սեղանին վրայ մատոյց եւ քարոզեց Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: «Հայր Մեր»-էն առաջ Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Դարիպեան նախագահեց Ս. Աթոռոյս հանգուցեալ Պատրիարքաց հոգիներուն համար կատարուած հոգեհանգստեան պաշտօնին:

Կիրակի, 6 Յունուար.- Ե. Կիրակի Յիսնակի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Կէսօրէ ետք, Լուսարարապետ Սրբազան Հայրը նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտուած Ս. Ստեփանոսի նախատօնակին: Տօնին բուրվառակիր հայրերն էին Տ. Էմմանուէլ Վրդ. Աթաշանեան եւ Տ. Թէոդորոս Վրդ. Զաքարեան:

Երկուշաբթի, 7 Յունուար.- Սրբոյն Ստեփանոսի Նախասարկաւագին եւ Առաջին Մարտիրոսին: Առաւօտեան ժամերգութեան աւարտին Ս. Աթոռոյս բարեշնորհ ութ սարկաւագներ եւ երկու ուրարակիրներ՝ առաջնորդութեամբ երկու բուրվառակիր վարդապետներու, մարգարտագարդ սաղաւարտներով եւ տապանակ ու բուրվառ ի ձեռին, պանծացուցին յիշատակը իրենց մտատիպարին: Արարողութեան նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Ս. Պատարագը մատուցուեցաւ Աւանդատան մէջ գտնուող Ս. Ստեփանոսի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Ներսէհ Աբղ. Աղոյեան:

Կէսօրէ ետք, գլխաւոր Առաքելոց նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Տ. Սեւան Արք. Դարիպեան:

Երեքշաբթի, 8 Յունուար.- Սրբոց Առաքելոցն՝ Պետրոսի եւ Պօղոսի: Մայր Տաճարի Ս. Պետրոսի վերնամատարան մէջ Ս. Պատարագը մատոյց Տ. Տիրան Աբղ. Յակոբեան:

Չորեքշաբթի, 9 Յունուար.- Կէսօրէ ետք, Որդուց Որոտման տօնի հանդիսաւոր նախատօնակին նախագահեց Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը, որմէ ետք Ս. Աթոռոյ՝ «Որ էնն յէութեան» շարականի երգեցողութեամբ Միաբանութիւնը թափօրով բարձրացաւ Պատար-

Խարքարան:

Հինգշաբթի, 10 Յունուար.- Տօն Սրբոց Որդւոց Որոտման՝ Յակոբայ Առաքելոյն եւ Յովհաննու Աւետարանչին: Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատրան մէջ օրուան Ս. Պատարագը մատոյց Գերաշնորհ Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Պատարագէն ետք Պատրիարք Սրբազան Հայրը ամպհովանիի տակ Ս. Խաչափայտի մասունքն ի ձեռին, նախագահեց եռադարձ մեծահանդէս թափօրին: Ապա Միաբանութիւնը եւ ժողովուրդը թափօրով Ս. Աթոռոյ «Որ էնն յէութեան» շարականի երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարան: Պատրիարք Սրբազան Հայրը, օրհնուած նշխար բաժնեց բոլորին, փակելով շարքը Աւագ Տօներուն:

Շաբաթ, 12 Յունուար.- Սրբոցն Բարսղի Հայրապետին եւ եղբօր նորա Գրիգորի Նիւսացւոյն, Սեղբեստրոսի Հռոմայ Հայրապետին եւ Աբբա Եփրեմի Խուռին Ասորւոյ: Ս. Պատարագը մատուցեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթճեան:

Կիրակի, 13 Յունուար.- Զ. Կիրակի Յիսնակի: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, ապա միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար: Ս. Պատարագը մատուցուեցաւ մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Վրդ. Զաքարեան:

Երկուշաբթի, 14 Յունուար.- Կաղանդ: Տարեմուտ 2019 թուականին Քրիստոսի (Ըստ Հին Տոմարի): Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց ժամօրհնող՝ Տ. Շնորհք Աբղ. Պալոյեան: Ապա Միաբանութիւնը եւ ժողովուրդը բարձրացան Պատրիարքարան՝ երգելով Ս. Աթոռոյ մաղթերգը: Նորին Ամենապատուութիւնը շնորհաւորեց բոլոր ներկաները Նոր Տարուան առիթով և ըստ սովորութեան, նարինջ բաժնեց ամենուն:

Նոյն առաւօտեան Ս. Պատարագ մատուցուեցաւ նաեւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Ղեւոնդ

Վրդ. Յովհաննիսեան:

Ուրբաթ, 18 Յունուար.- Ժրագալոյց Ս. Ծննդեան: Առաւօտեան ժամը 9:45-ին Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը ինքնաշարժերու շարանով մը ճամբայ ելաւ դէպի Բեթղեհէմ: Ծամբու կիսուն Յունաց Ս. Եղիա վանքին առջեւ Պատրիարք Սրբազանը դիմաւորելու եկած էին Պէյթ-Սահուրի եւ Պէյթ-Ճալայի քաղաքապետները եւ պետական ներկայացուցիչները: Քաղաքի մուտքին, ինքնաշարժներէն դուրս ելլելով, Պատրիարք Սրբազանը եւ Միաբանութեան անդամները յառաջացան մինչեւ հրապարակ:

Բեթղեհէմի հրապարակին վրայ դիմաւորուելով Բեթղեհէմի քաղաքապետէն եւ պաշտօնատարներէն, «Խորհուրդ Մեծ» շարականի երգեցողութեամբ թափօրը բարձրացաւ Ծննդեան Տաճարի Հայոց Վանքը:

Յետ միջօրէի ժամը 2-ին Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ «Հրաշափառ»-ով մուտք կատարուեցաւ Սիւնազարդ Գաւիթէն դէպի Ս. Ծննդեան Տաճարի Ս. Այրը: Ժրագալոյցի Ս. Պատարագը Ս. Այրին մէջ մատոյց եւ քարոզեց Պոլիսէն Ս. Երկիր ժամանած Տ. Թաթուլ Ծ. Վրդ. Անուշեան: Ապա Պատրիարք Սրբազանը նախագահեց Ծննդեան նախատօնակին, որմէ յետոյ Միաբանութիւնը զգեստաւորեալ, թափօրով եւ երգեցողութեամբ Սիւնազարդ գաւիթէն անցնելով բարձրացաւ Հայոց Վանք: Բակին մէջ կարդացուեցաւ Ս. Ծննդեան Աւետարան եւ երգուեցաւ «Փառք ի բարձունս»:

Շաբաթ, 19 Յունուար.- Տօն Ծըննդեան եւ Աստուածայայտնութեան: Կէս գիշերէն առաջ ժամը 10-ին սկսուած գիշերային պաշտամունքէն յետոյ, Միաբանութիւնը կ'իջնէ Ս. Ծննդեան Այր, ուր կը շարունակուի «Փառք ի բարձունս»-ի երգեցողութիւնը: Պաղեստինեան կառավարութեան ներկայացուցիչներ ներկայ եղան, եւ աւարտին, Պատրիարք Սրբազան Հօր Ս. Ծննդեան հայերէն եւ արաբերէն պատգամներէն յետոյ մեկ-

նեցան՝ շնորհատրեղով Պատրիարք Սըրբազան Հայրը: Պաշտամունքները շարունակուեցան Տաճարին մէջ:

Երկրորդ Ս. Պատարագը Աւագ Սեղանին վրայ մատոյց Կ. Պոլիսէն ուխտաւորաբար Երուսաղէմ ժամանած Տ. Յարութիւն Աբղ. Տամատեան: «Ջրօրհնէք»-ի արարողութեան հանդիսապետեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Ս. Ծննդեան Այրին մէջ պատարագեց Լուսարարապետ Սրբազան Հայրը: Պաշտամունքներու աւարտին՝ առաւօտեան ժամը 6:30-ին, Միաբանութիւնը վերադարձաւ Երուսաղէմ:

Երուսաղէմի մէջ ճրագալոյցի արարողութիւն կը կատարուի Ս. Յարութեան Տաճարին մէջ: Ս. Գերեզմանին վրայ տեսչական պատարագ մատոյց Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Ապա Քրիստոսի Ս. Գերեզմանի առջեւ կատարուեցաւ «Ջրօրհնէք»-ի արարողութիւն:

Առաւօտեան Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան: «Ջրօրհնէք»-ի արարողութեան հանդիսապետեց Տ. Պարետ Ծ. Վրդ. Երէցեան:

Կիրակի, 20 Յունուար.- Պատրիարք Սրբազան Հօր նախագահութեամբ՝ միաբան հայրեր, սարկաւազներ, ժառանգաւոր սաներ եւ հաւատացեալ հայորդիներ, ինքնաշարժերով մեկնեցան Յորդանան գետ, ուր կատարուեցաւ «Ջրօրհնէք» արարողութիւն:

Ուրբաթ, 25 Յունուար.- Կէսօրէ ետք, նախատօնակին նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 26 Յունուար.- Տօն Անուանակոչութեան Տեառն: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, ապա միաբան հայրեր Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ, «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Ս. Յարութեան Տաճար: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատոյց եւ քարոզեց Տ. Պարետ Ծ. Վրդ. Երէցեան:

Դէպի վանք դարձին, Հայոց Թաղի մուտքէն Միաբանութիւնը «Լոյս ի Լուսոյ» շարականը երգելով բարձրացաւ Պատրիարքարան: Պատրիարք Սրբազանը նախագահեց «Տնօրհնէք»-ի արարողութեան եւ նարինջ բաժնեց ներկաներուն: Ապա Միաբանութիւնը «Լոյս ի Լուսոյ» շարականի երգեցողութեամբ վարդապետաց սեղանատուն իջաւ Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ, ուր կատարուեցաւ «Տնօրհնէք»-ի արարողութիւն, եւ տեղի ունեցաւ Միաբանական ճաշ՝ աւանդական «հարիսայով»:

Կիրակի, 27 Յունուար.- Ա. Կիրակի զկնի Ծննդեան: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, ապա միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար: Ս. Պատարագը մատուցուեցաւ մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Տաճատ Վրդ. Ծատուրեան:

Կէսօրէ ետք, նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Երկուշաբթի, 28 Յունուար.- Տօն Ծննդեան Ս. Յովհաննու Կարապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարին, աջակողմեան դասին մէջ գրտնուող Ս. Կարապետի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Շաբաթ, 2 Փետրուար.- Սրբոյն Թէոդորոսի Զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Շնորհք Աբղ. Պալոյեան:

Կիրակի, 3 Փետրուար.- Բ. Կիրակի զկնի Ծննդեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ձախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնի Խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան:

Շաբաթ, 9 Փետրուար.- Սրբոց հայրապետացն՝ Աթանասի եւ Կիւրղի եւ Գրիգորի Աստուածաբանին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր:

Ժամարարն էր Տ. Ներսես Աբղ. Աղոյեան:

Կիրակի, 10 Փետրուար.- Գ. Կիրակի զկնի Ծննդեան: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, ապա միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար: Ս. Պատարագը մատուցուեցաւ մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Ժամարարն էր Տ. Գեղամ Ծ. Վրդ. Զաքարեան:

Շաբաթ, 16 Փետրուար.- Սրբոց՝ որդւոց եւ թոռանց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ՝ Արիստակիսի, Վրթանիսի, Յուսկանն, Գրիգորիսի եւ Դանիէլի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Կիրակի, 17 Փետրուար.- Գ. Կիրակի զկնի Ծննդեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարին, աշակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Կորին Վրդ. Բաղդասարեան:

Ուրբաթ, 22 Փետրուար.- Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Շաբաթ, 23 Փետրուար.- Ս. Սարգսի Զօրավարին և որդւոյ նորա մարտիրոսին եւ չորեքտասան զինուորացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Սարգսի մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան: Ըստ սովորութեան կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն հանգուցեալ ազգային բարերարներու՝ Գալուստ ու Սարգիս Կիւպէնկեաններու եւ համայն Կիւպէնկեան գերդաստանի ննջեցեալներուն համար:

Կիրակի, 24 Փետրուար.- Ե. Կիրակի զկնի Ծննդեան: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, ապա միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար: Ս. Պատարագը մատուցուեցաւ մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Վրդ. Աթաշանեան:

Երեքշաբթի, 26 Փետրուար.- Կէսօրէ ետք, Տեառնընդառաջի մեծահանդէս նախատօնակը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, որմէ ետք կատարուեցաւ «Անդաստան» եւ մոմավառութիւն, նախագահութեամբ՝ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր:

Գիշերասկզբին Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Եկեսցէ»-ի հսկման կարգը: Հանդիսապետն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Չորեքշաբթի, 27 Փետրուար.- Տեառնընդառաջ: Տօն Քառասնօրեայ Գալստեանն Քրիստոսի ի Տաճարն: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուցուեց եւ քարոզեց Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Շաբաթ, 2 Մարտ.- Սրբոյն Իսահակայ Պարթեւ Հայրապետին մերոյ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Վրդ. Զաքարեան:

Կիրակի, 3 Մարտ.- Զ. Կիրակի զկնի Ծննդեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ձախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնի Խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Տիրան Աբղ. Յակոբեան:

Չորեքշաբթի, 6 Մարտ.- Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Հինգշաբթի, 7 Մարտ.- Ս. Վարդանանց Զօրավարացն մերոց (1036 վկայիցն): Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ, ըստ սովորութեան, պատարագեց եւ քարոզեց ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի տեսուչ՝ Տ. Տաճատ Վրդ. Ծատուրեան: «Հայր Մեր»-էն առաջ Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի անուան տօնին առթիւ կատարուած «Հայրապետական Մաղթանք»-ին:

Ուրբաթ, 8 Մարտ.- Գիշերային ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, ապա միաբան հայրեր մեկնեցան Ասորւոց վանք: Ս. Պատարագը մատուցուեցաւ

Ս. Մարկոս Աւետարանչի եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետեց եւ Պատարագի ընթացքին քարոզեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Դարիպեան: Ժամարարն էր Տ. Տաճատ Վրդ. Ծատուրեան:

Շաբաթ, 9 Մարտ.- Կ. Պոլսոյ Ս. Ժողովոյն Հարիւր Յիսուն Հայրապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Շնորհք Աբղ. Պալոյեան:

Կէսօրէ ետք, Մայր Տաճարի Աւագ խորանը, սեղանները եւ գլխաւոր սրբապատկերները, «Համբարձի» շարականը երգուած ժամանակ վարագուրուեցան Պատրիարք Սրբազան Հօր, Գերաշնորհ եւ Հոգեշնորհ Հայրերու ձեռքով:

Կիրակի, 10 Մարտ.- Ա. Քառասնորդաց: Բուն Բարեկենդան: Փակեալ խորանի Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուց Տ. Բարսեղ Վրդ. Գալէմտէրեան: Դպրապետի պաշտօնը վարեց եւ «Հայր Մեր»-էն առաջ քարոզեց Տ. Պարետ Ծ. Վրդ. Երէցեան:

Ուրբաթ, 15 Մարտ.- Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Շաբաթ, 16 Մարտ.- Սրբոյն Թէոդորոսի Զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Ներսէհ Աբղ. Ալոյեան:

Կէսօրէ ետք Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան ժամերգութիւնն ու նախատօնակը, ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութիւն Տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան:

Կիրակի, 17 Մարտ.- Բ. Քառասնորդաց. Արտաքսման: Առաւօտեան ժամը 6-ին միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ մեր վերնամատրան մէջ եւ ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ:

Պատարագիչն էր Տ. Էմմանուէլ Վրդ. Աթաշանեան: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ եռադարձ մեծահանդէս թափօր Քրիստոսի Գերեզմանին եւ մէկ անգամ Պատանատեղւոյն շուրջ, նախագահութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր:

Շաբաթ, 23 Մարտ.- Սրբոյն Կիւրղի Երուսաղէմայ հայրապետին եւ միւս Կիւրղի եպիսկոպոսին եւ մօրն նորա Աննայի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան մէջ գտնուող Ս. Կիւրղի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Ս. Պատարագէն ետք, կատարուեցաւ հոգեհանգստեան կարգ, վասն հոգւոցն Սուլթանի, Կարինէի, եւ ծնողացն Կարապետի եւ Մարիի եւ Կիւրեղեան գերդաստանի հոգիներուն ի հանգիստ, հանդիսապետութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր:

Կիրակի, 24 Մարտ.- Գ. Քառասնորդաց. Անառակին: Ժամերգութիւններն ու Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Ժամարարան էր Տ. Գեղամ Ծ. Վրդ. Զաքարեան: «Հայր Մեր»-էն առաջ քարոզեց Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Շաբաթ, 30 Մարտ.- Սրբոցն Յովհաննու Երուսաղէմայ Հայրապետին եւ Հայրապետին մերոյ՝ Յովհաննու Օձնեցւոյն եւ վարդապետացն մերոց Յովհաննու Որոտնեցւոյն եւ Գրիգորի Տաթեւացւոյն: Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Կիրակի, 31 Մարտ.- Գ. Կիրակի Քառասնորդաց, Տնտեսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարին, աշակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Տիրան Աբղ. Յակոբեան: «Հայր Մեր»-էն առաջ քարոզեց Տ. Տաճատ Վրդ. Ծատուրեան:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ



Ուրբաթ, 28 Դեկտեմբեր.- Դեկտեմբեր ամսու վերջաւորութեան Կաթողիկէ եւ Բողոքական եկեղեցիներու Ս. Ծննդեան տօնի առիթով, Երուսաղէմի մէջ սկսան շնորհաւորութիւնները:

Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը, հանդիսապետութեամբ Լուսարարապետ՝ Դերշ. Տ. Սեւան Արքեպիսկոպոս Դարիպեանի, շնորհաւորելու գացին Սուրբ Երկրի Քիւսթոտ՝ Հ. Ֆրանսեսկո Փաթթոնի եւ Ֆրանչիսկեան Միաբանութեան, եւ Լատին Դերշ. Տ. Փիերպատիսթա Արքեպիսկոպոս Փիցաբալային եւ Միաբանութեան:

Ուրբաթ, 11 Յունուար.- Առաւօտեան ժամը 10:30-ին, Լուսարարապետ՝ Դերշ. Տ. Սեւան Արքեպիսկոպոս Դարիպեանի գլխաւորութեամբ Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը Ս. Ծննդեան շնորհաւորութիւններու գնաց Ասորիներուն, Դպտիներուն եւ Հապէշներուն:

Նոյն օրը, ժամը 11-ին, Ամանորի եւ Ս. Ծննդեան տօներու առիթով Հայ Երիտասարդաց Միութեան Երուսաղէմի մասնաճիւղի Վարչականները այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ: Հանդիպման ընթացքին վարչականները Պատրիարք Սրբազան Հօր յանձնեցին 2019 տարւոյ օրացոյցը եւ շնորհաւորեցին անոր Ամանորը եւ գալիք Սուրբ Ծնունդը:

Կիրակի, 13 Յունուար.- Երեկոյեան ժամը 7-ին, Ս. Ծննդեան տօնական հանդիսութեանց սեմին, ընդունուած սովորութեան համաձայն, ժառանգաւորաց Վարժարանի սաները

հանդէս եկան Կաղանդի գեղեցիկ յայտագրով՝ համեմուած գեղեցիկ մենեքեքով, խմբերգերով եւ ասմունքով: Լուսարարապետ Սրբազան Հօր եւ միաբանութեան ժամանումէն յետոյ բացման խօսք ըրաւ Բարշ. Աշոտ Սարկաւազ Դազարեան՝ բարիգալուստի եւ Նոր Տարուայ շնորհաւորական խօսքեր ուղղելով ներկաներուն, ապա հրաւիրեց Վարժարանի Տեսուչ՝ Տ. Տաճատ Վարդապետ Ծատուրեանը՝ կատարելու իր ողջոյնի խօսքը: Հանդիսութեան ողջ ընթացքին ժառանգաւորաց երգչախումբը Բարշ. Արթուր Սարկաւազ Վարդանեանի ղեկավարութեամբ կատարեց «Լուռ գիշեր», «Dona Nobis», «Ազգ իմ փառապանծ» եւ «Ես իմ անուշ Հայաստանի» խմբերգերը: Մենեքեքերով հանդէս եկան Տիրացու Յարութիւն Բաբայեան՝ «Մայրամուտ» երգով, իսկ Սարգիս Սիմոնեան «Ծիրանի ծառ» երգով: Իսկ ասմունքով՝ Արման Ակլունց՝ «Արի Նոր Տարի», Գէորգ Յովհաննիսեան՝ «Տարօրինակ, տարօրինակ մարդ արարած», Սարգիս Գինոսեան՝ «Ոսկին վերստին ոսկի է մնում» բանաստեղծութիւններով: Երեկոյի վերջաւորութեան տեսուչ Հայր Սուրբը իր շնորհակալական խօսքը ըսաւ հանդէսի կազմակերպիչներուն եւ յատկապէս շեշտեց, որ հանդէսի թէ՛ երգերը եւ թէ՛ բանաստեղծութիւնները պատահական չէին ընտրուած, անոնք ուղղուած էին մարդու մարդ մնալուն: Իր խօսքէն յետոյ Հայր Սուրբը հրաւիրեց Լուսարարապետ Սրբազան Հայրը կատարելու իր շնորհաւորական խօսքն ու փակման աղօթքը:

Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս Տարեմուտի կէս-գիշերային զանգակահարութեան աւանդութիւնը տեղի ունեցաւ

Վանքի Մեծ Բակին մէջ, ուր հաւաքուած էին միաբան հայրեր, ժառանգաւոր սաներ եւ Սաղիմահայեր: Հնչեցին Մայր Տաճարի մեծ զանգերը. ժառանգաւորաց սաներուն կողմէ «Փառք ի բարձունս» երգով աւետուեցաւ աւանդական Նոր Տարուան մուտքը: Ապա Հոգշ. Տ. Տիրան Աբեղայ Յակոբեան շնորհաւորեց ներկաներուն Ամանորը եւ գալիք Սուրբ Ծնունդը՝ մաղթելով բոլորին քաջառողջ կեանքի երկար օրեր:

Չորեքշաբթի, 16 Յունուար.- Առաւօտեան ժամը 11-ին, Ամանորի եւ Ս. Ծննդեան տօներու առիթով Երուսաղէմի նորընտիր Քաղաքապետ՝ Տիար Մոշէ Լիոնն այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Պատրիարք Արքեպիսկոպոս Սրբազան Հօր հետ: Հանդիպման ընթացքին Սուրբ Աթոռոյս Գահակալը շնորհաւորեց Մեծայարգ Տիար Լիոնը՝ Քաղաքապետ ընտրուելուն առիթով եւ յաջողութիւն մաղթեց: Նորընտիր Քաղաքապետն ալ իր կարգին շնորհաւորեց Պատրիարք Արքեպիսկոպոս Սրբազան Հօր Ամանորը եւ Սուրբ Ծնունդը եւ ապա տեղեկացաւ Պատրիարք Արքեպիսկոպոս Սրբազան Հօր մտահոգութիւններու եւ ապագայ ծրագիրներու մասին:

Նոյն օրը երեկոյեան ժամը 4-ին, Հայոց Ամանորի եւ Ս. Ծնունդեան տօներուն առիթով Պատրիարքարան այցելեց Երուսաղէմի Ղպտոց Արքեպիսկոպոս՝ Գերշ. Տ. Անպա Անտոնիոս եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Պատրիարք Արքեպիսկոպոս Սրբազան Հօր հետ:

Հինգշաբթի, 17 Յունուար.- Կէսօրուան ժամը 12-ին, Ամանորի եւ Ս. Ծննդեան տօներու առիթով Բեթղէհէմի ընդհանուր ոստիկանապետ Տիար Մոշէ Ավի, ընկերակցութեամբ Տիար Մահդի Սատէի այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Ամենապատիւ Պատրիարք Արքեպիսկոպոս Սրբազան Հօր հետ:

Նոյն օրը, երեկոյեան ժամը 4-ին, Կ. Պոլիսէն Հոգշ. Տ. Մաղաքիա Աբեղայ Պէսքիսիզեան ընկերակցութեամբ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան Լուսարարապետ՝ Հոգշ. Տ. Թաթուլ Ծ. Վար-

դապետ Անուշեանի ուխտաւորներու խումբով այցելեցին Պատրիարքարան եւ ստացան Ամենապատիւ Պատրիարք Արքեպիսկոպոս Սրբազան Հօր օրհնութիւնը:

Շաբաթ, 19 Յունուար.- Ս. Ծննդեան տօներու առիթով Կ. Պոլիսէն Սուրբ Երկիր ժամանած ուխտաւորներ Հոգշ. Տ. Յարութիւն Աբեղայ Տամատեանի եւ Սեւան Կ. Արկ. Արաբօղլուի առաջնորդութեամբ այցելեցին Պատրիարքարան եւ ստացան Ամենապատիւ Պատրիարք Արքեպիսկոպոս Սրբազան Հօր օրհնութիւնը:

Երկուշաբթի, 21 Յունուար.- Առաւօտեան ժամը 10-էն մինչեւ կէսօր, յաջորդաբար Պատրիարքարան շնորհաւորելու եկան Ֆրանչիսկեան Միաբանութիւնը՝ Քիւսթոտի գլխաւորութեամբ, Լատինաց Միաբանութիւնը եւ Կաթոլիկ, Բողոքական, Հապէշ, Ղպտի եւ Ասորի Ուղղափառ Եկեղեցիներու հոգեւոր պետեր եւ ներկայացուցիչներ:

Նոյն օրը, երեկոյեան ժամը 5-ին, Արքեպիսկոպոս Սրբազան Հօր Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ էքիմենիք աղօթք՝ վասն Քրիստոնէութեան միութեան: Աղօթքին մասնակից էին նաեւ Սուրբ Երկրի տարբեր քրիստոնեայ յարանուանութեանց եկեղեցականներ: Հայ Եկեղեցւոյ կողմէ քարոզեց Դիւանապետ՝ Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան:

Չորեքշաբթի, 23 Յունուար.- Իսրայէլի Արդարադատութեան եւ Զբօսաշրջութեան Նախարարութիւններու մէջ Քրիստոնեայ համայնքներու պատասխանատուներ՝ Տիար Եոսի Հէշլեր եւ Տիկին Նոկա Շեր Կրեկօ այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Ամենապատիւ Պատրիարք Արքեպիսկոպոս Սրբազան Հօր հետ: Հանդիպման ընթացքին քննարկուեցան կարգ մը հարցեր, անդրադարձ եղաւ նաեւ հայ ուխտաւորներու Իսրայէլ մուտքի արտօնագրի հարցին: Հանդիպման վերջաւորութեան Տիկին Կրեկօ Պատրիարք Արքեպիսկոպոս Սրբազանի փոխանցեց Զբօսաշրջութեան Նախարարութեան կողմէ պատրաստուած օրացոյցը, որու մէջ

նշուած են քրիստոնէական տարբեր համայնքներու եւ Իսրայէլի բոլոր կրօնական համայնքներու տօները:

Հինգշաբթի, 24 Յունուար.- Առաւօտեան ժամը 10:30-ին, Բեթղէհէմի կառավարութեան ներկայացուցիչ, Սբ. Ծննդեան Տաճարի նորոգութեան յանձնախումբի անդամները այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Ուրբաթ, 25 Յունուար.- Բեթղէհէմի քաղաքապետ՝ Տիար Անտոն Սալման այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Երեքշաբթի, 29 Յունուար.- Առաւօտեան ժամը 10-ին, Երուսաղէմի Պապական Նուիրակը այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Ուրբաթ, 8 Փետրուար.- Առաւօտեան ժամը 9:30-ին Պատրիարքարան այցելեց եւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ հանդիպում ունեցաւ Երեւանի Մաշտոցի անուան Մատենադարանի կրտսեր գիտաշխատող Օրինորդ՝ Լուսինէ Սարգսեան, ով Երուսաղէմ ժամանած էր Վանքիս Սուրբ Թորոս Զեռազրատան մէջ ուսումնասիրութիւն կատարելու:

Հինգշաբթի, 14 Փետրուար.- Ֆրեզնոյի մէջ Հայաստանի Հանրապետութեան Պատուոյ Հիւպատոս Դոքտ. Պերճ Աբգարեան այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Ուրբաթ, 15 Փետրուար.- Առաւօտեան ժամը 11:30-ին, Եւրոպական Միութեան ղուրս կրօնի ազատութեան խթանման յատուկ ներկայացուցիչ՝ Տիար Ճան Ֆիկել այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Տ.

Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Հինգշաբթի, 21 Փետրուար.- Առաւօտեան ժամը 11-ին, Մեքսիքոյի Ներկայացուցչութեան Պաղեստինեան գրասենեակի մեծաւոր՝ Dr. Pedro Blanco Perez այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Երկուշաբթի, 25 Փետրուար.- Առաւօտեան ժամը 9:30-ին, Ֆինլանտայի Ներկայացուցչութեան Պաղեստինեան գրասենեակի մեծաւոր՝ Տիկին Աննա-Կասիա Հէյքինեն այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Երեքշաբթի, 5 Մարտ.- Երեկոյեան ժամը 6-ին, ՀՀ ԱԳՆ փոխնախարար Տիար Գրիգոր Յովհաննիսեան ընկերակցութեամբ Իսրայէլի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Տիար Արմէն Սմբատեանի, Հայաստանի մէջ պատուոյ հիւպատոս Տիար Աշոտ Շախմուրատեանի եւ Տիար Յուրի Բաբախանեանի այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Սուրբ Աթոռոյս Գահակալ Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Երեքշաբթի, 19 Մարտ.- Իսրայէլի նախագահ՝ Վսեմաշուք Տիար Ռուվէն Ռիվլին այցելեց Յորդանան գետ եւ հանդիպում ունեցաւ Սուրբ Երկրի Հոգեւոր Պետերու հետ: Պատրիարքութեանս կողմէ հանդիպմանը ներկայ գտնուեցաւ Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեան, ընկերակցութեամբ Դիւանապետ՝ Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեանի եւ Աւագ Թարգման՝ Տ. Տիրան Աբղ. Յակոբեանի:

Երկուշաբթի, 25 Մարտ.- Կէսօրեան ժամը 12-ին, Արժանթինի դեսպան՝ Տիար Մարիանո Քաուչինո այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ: